



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(զանգապ թիվ 69936/10)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

16 մայիսի 2019թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է
ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

Թադետոյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal]՝ Նախագահ,

Թիմ Այքը [Tim Eicke],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ դատավորներ,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,

2019 թվականի ապրիլի 23-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի տկն Գայանե Թադետոյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2010 թվականի նոյեմբերի 25-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 69936/10) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ա. Ղազարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2016 թվականի մարտի 10-ին ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքի վերաբերյալ բողոքի մասին ծանուցումն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1966 թվականին եւ ապրում է Երեւանում:

Ա. Գործի նախապատմությունը

5. 2001 թվականի հոկտեմբերի 5-ին Կառավարությունն ընդունել է թիվ 950 որոշումը, որով հաստատել է Երեւան քաղաքում տեղակայված հողամասերը եւ անշարժ գույքը որպէս օտարման գոտի սահմանելու ընթացակարգը, ինչպէս նաեւ սահմանել է փոխհատուցում վճարելու կանոնները, գնային առաջարկները եւ դրանց իրացումը:

6. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատել է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող հողատարածք պարունակող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345 000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

7. Ծրագրի իրականացման գործընթացը ղեկավարելու նպատակով ստեղծվել է հատուկ մարմին՝ Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ):

8. Դիմումատուին պատկանել է 240,2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինություն եւ Երեւանի կենտրոնում գտնվող՝ 437,8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով վարձակալությամբ [տրամադրված] հողակտոր, որի վրա գտնվում էր այդ շինությունը: Այդ գույքը ներառված էր պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտում: Դիմումատուն ձեռք է բերել այդ գույքը 2003 թվականի դեկտեմբերի 17-ին 1 000 000 ՀՀ դրամով (մոտավորապէս 1 767 եվրո՝ տվյալ ժամանակահատվածում):

Բ. Դիմումատուի գույքի օտարումը

9. 2004 թվականի սեպտեմբերի 7-ին դիմումատուն համաձայնագիր է կնքել Գրասենյակի հետ, որով 265 020 ԱՄՆ դոլարի դիմաց հրաժարվել է իր գույքից: Պայմանագրով նախատեսվում էր նաեւ 78 006 ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական խրախուսում, որը պետք է վճարվեր դիմումատուին: Այսպիսով, վաճառքի ընդհանուր գումարը, ներառյալ օրենքով պահանջվող 15%-ը, կազմել է 394 479 ԱՄՆ դոլար, որից դիմումատուն ստացել է 355 031 ԱՄՆ դոլար, քանի որ 39 447 ԱՄՆ դոլարը գանձվել է որպես եկամտահարկ:

10. 2006 թվականի հունվարի 13-ին ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը քրեական գործով վարույթ է հարուցել Գրասենյակի պաշտոնատար անձանց դեմ՝ դիմումատուի գույքի շուկայական արժեքի գիտակցաբար գերազնահատման եւ նրան գերավճարելու համար: Դիմումատուն քրեական գործի քննության ընթացքում հանդես է եկել որպես վկա:

11. Դիմումատուի ցուցմունքի համաձայն՝ վարույթի ընթացքում ինչ-որ պահի Գրասենյակի ղեկավարը պահանջել է նրանից հետ վճարել 180 000 ԱՄՆ դոլար, հակառակ դեպքում նա կարող էր քրեական պատասխանատվության ենթարկվել պետական միջոցները յուրացնելու համար: 2006 թվականի փետրվարի 3-ին դիմումատուն 75 820 000 ՀՀ դրամ (մոտավորապես 133 958 եվրո) է փոխանցել Գրասենյակի հաշվեհամարին:

12. Դատախազի՝ 2006 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ գործի քննությունը կարճվել է հանցագործության կատարման վերաբերյալ փաստերի բացակայության պատճառով: Այդ որոշման համապատասխան մասերը շարադրվել են հետեւյալ բովանդակությամբ.

«... չի հաստատվել, որ [օտարման գոտու մի շարք բնակիչներ] խաբեության հետեանքով յուրացրել են այլ անձանց սեփականությունը... եւ հետեաբար, նրանց գործողություններում բացակայում է corpus delicti (հանցակազմը):

Քրեական գործի քննության արդյունքում չի հաստատվել, որ [Գրասենյակի] աշխատակիցները պատշաճ կերպով չեն կատարել իրենց պաշտոնական պարտականությունները կամ օգտագործել են իրենց պաշտոնական դիրքը՝ ի վնաս իրենց ծառայության շահերի...»:

13. Դիմումատուն հետագայում պահանջել է, որ Գրասենյակը վերադարձնի դրա հաշվեհամարին վճարված 75 820 000 ՀՀ դրամը: 2007 թվականի ապրիլի 2-ին նա պատասխան է ստացել Գրասենյակի ղեկավարից, որում ասվել է, որ նա նշված գումարը փոխանցել է Գրասենյակի հաշվեհամարին՝ առանց որեւէ փաստաթղթային ապացույցի: Դիմումատուի խոսքերի համաձայն՝ դրանից հետո նա երկու անգամ կապ է հաստատել Գրասենյակի հետ՝ պահանջելով վերադարձնել դրա հաշվեհամարին փոխանցված գումարը, սակայն ոչ մի պատասխան չի ստացել:կ.օլիօ

Գ. Եկամտահարկի հետ վերադարձմանը եւ փոխհատուցմանը վերաբերող վարույթները

14. 2007 թվականի հոկտեմբերի 30-ին դիմումատուն հայց է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով վերականգնել Գրասենյակին հետ վճարված գումարը, իրենից գանձված եկամտահարկի գումարը եւ իր ակտիվներն ապօրինի կերպով պահելու համար կրած վնասները: Դիմումատուն պնդել է, որ ինքը հետ է վճարել ստացված վաճառքի գնի միայն մի մասը, որովհետեւ նա շփոթված է եղել Գրասենյակի ղեկավարի հետ ունեցած խոսակցությունից:

15. Գրասենյակն իր պատասխանում պնդել է, որ դիմումատուն, նշված գումարը հետ վճարելով, փաստացի ընդունել է, որ իրեն գերավճարել են, եւ այդ պատճառով քրեական վարույթը կարճվել է: Երեւանի քաղաքապետարանը, որը ներգրավված է եղել վարույթում, ներկայացրել է Գրասենյակի փաստարկին համանման փաստարկ:

16. 2008 թվականի մայիսի 27-ին դիմումատուն հետ է վերցրել վնասների մասով իր հայցը:

17. 2008 թվականի հուլիսի 16-ին Երեւանի քաղաքացիական դատարանը մասնակիորեն բավարարել է դիմումատուի պահանջները: Այդպիսով, այն նշել է, որ 75 820 000 ՀՀ դրամի չափով գումարը պետք է վերադարձվի դիմումատուին, քանի որ չկար որեւէ իրավական հիմք Գրասենյակի կողմից այդ գումարը պահելու համար՝ այն հիմնավորմամբ, որ քրեական վարույթը կարճելու մասին որոշմամբ հաստատվում էր, որ դիմումատուն որեւէ ապօրինի արարք չի կատարել:

18. Գրասենյակի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա 2008 թվականի հոկտեմբերի 20-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է վճիռը եւ գործն ուղարկել ըստ էության նոր քննության: Որոշման մեջ նշվում էր նաեւ, որ Ֆինանսների նախարարությունը պետք է ներգրավվի վարույթում, քանի որ դիմումատուի պահանջները կարող էին ազդեցություն ունենալ պետական բյուջեի վրա:

19. 2009 թվականի օգոստոսի 4-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վճիռ է կայացրել, որով մերժել է դիմումատուի պահանջները: Դատարանը մասնավորապես նշել է, որ պետք է պատճառահետեւանքային կապ լինի ենթադրաբար կրած վնասի եւ ենթադրաբար վնաս հասցրած անձի մեղավորության միջեւ, եւ որ այս մասով դիմումատուն էր կրում ապացուցման բեռը:

20. Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ պնդելով, որ դատարանը կիրառել է օրենքի՝ վնասների փոխհատուցման մասով դրույթները, սակայն նա հետ էր վերցրել վնասների մասով իր հայցը եւ պարզապես պահանջում էր վերադարձնել Գրասենյակի կողմի ապօրինաբար պահվող իր սեփականությունը: Այնուհետեւ նա պնդել է, որ իրեն մեղադրանք չի առաջադրվել քրեական վարույթի ընթացքում. այն փաստը, որ նա վճարել էր նշված գումարը, հաստատվել էր վճարման անդորրագրի միջոցով, եւ ավելին, Գրասենյակը երբեք չի հերքել իր սեփականությունը տիրապետելու փաստը:

21. 2010 թվականի մայիսի 4-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը: Այդ վճռի համապատասխան մասն ունի հետևյալ բովանդակությունը՝

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները եւ այլ գույք, եթե ձեռք բերողն ապացուցում է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին...:

Քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ վիճելի գումարի վերադարձման համար հայցվորի մոտ որպես հիմք է հանդիսացել [Գրասենյակի] պահանջը, որը հիմնված չի եղել ոչ օրենքի, ոչ... գործարքի վրա: Այսինքն՝ իրավական առումով պատասխանող [Գրասենյակի] պահանջը՝ 75 820 000 ՀՀ դրամ գումարի վերադարձման մասին, չի ունեցել որեւէ իրավական հիմնավորում, եւ դրա չկատարումը հայցվորի նկատմամբ չէր կարող ինքնին առաջ բերել... բացասական հետեւանքներ:

... [Գրասենյակի] նկատմամբ [դիմումատուն] չի ունեցել դրամական պարտավորություն: Այն, որ [դիմումատուն] տեղյակ է եղել իր եւ պատասխանող [Գրասենյակի] միջեւ պարտավորական իրավահարաբերության բացակայության մասին, հաստատվում է այն իրողությամբ, որ, բացի [2004 թվականի սեպտեմբերի 7-ի համաձայնագրից], կողմերի միջեւ բացակայում է որեւէ այլ... պայմանավորվածություն կամ գումարի վերադարձման կամ դրան առնչվող այլ համաձայնություն:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ սույն քաղաքացիական գործով ... ամբողջությամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Ինչ վերաբերում է [դիմումատուի] այն փաստարկին, որ [Գրասենյակը] իրեն տեղեկացնելով, որ վճարած գումարի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունն իրենց միջեւ կնքված պայմանագրային հարաբերության նկատմամբ քննություն է իրականացնում, իրեն զգել է թյուրիմացության մեջ, եւ դա է պատճառը, որ նա այդ գումարը հանձնել է [Գրասենյակին], այդ կապակցությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այդ փաստարկը ... կարող է հանդիսանալ ինքնուրույն իրավական հիմք [Գրասենյակի] գործողությունները դատական կարգով վիճարկելու համար»:

22. Դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք: Նա պնդել է, որ վարույթի ընթացքում չի հիմնավորվել այն փաստը, որ վճարումը կատարելիս ինքը տեղյակ է եղել այն փաստի մասին, որ որեւէ պարտավորություն չունի Գրասենյակի նկատմամբ, քանի որ նրան տեղեկացրել են հակառակի մասին, մասնավորապես, որ իրեն գերավճարել են, եւ որ նրան կարող են քրեական պատասխանատվության ենթարկել, եթե չվերադարձնի գումարը:

23. 2010 թվականի հուլիսի 21-ին Վճռաբեկ դատարանը բողոքը ճանաչել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1995 թվականի Սահմանադրություն (ուժի մեջ է 2005 թվականի դեկտեմբերի 6-ից՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված փոփոխություններից հետո)

24. 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Բ. Քաղաքացիական օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 1-ից)

25. 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դրամական միջոցները քաղաքացիական իրավունքի օբյեկտներ են:

26. 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

27. 1092-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի:

28. 1099-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները եւ այլ գույք, եթե ձեռք բերողն ապացուցում է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին կամ գույքը տրամադրել է բարեգործական նպատակներով:

Գ. ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշումը «Երեւան քաղաքի օտարման գոտիներում գտնվող հողամասերն ու անհշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձեւավորելու եւ իրացնելու կարգը հաստատելու մասին»

29. 4-րդ կետով նախատեսվում է, որ Երեւան քաղաքի օտարման գոտիներում գտնվող՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատկանող անշարժ գույքը վերցնելու, գնային առաջարկները կազմակերպելու, փոխհատուցելու եւ իրացնելու հետ կապված աշխատանքների համար պատասխանատու է Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակը:

**Դ. ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշումը
«Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում
կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին»**

30. Երեւանում կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով Կառավարությունը որոշել է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքը (հողամասեր, շենքեր եւ շինություններ) սահմանել որպես օտարման գոտիներ՝ 345 000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

**I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ
ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ**

31. Դիմումատուն Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով բողոքել է, որ իրեն անօրինական կերպով զրկել են իր՝ 75 820 000 ՀՀ դրամ արժողությամբ դրամական միջոցներից:

32. Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը շարադրված է հետեւյալ կերպ՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

Ա. Ընդունելիությունը

33. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն պետք է քրեական վարույթ հարուցեր Գրասենյակի նկատմամբ խարդախության համար: Քանի որ ամբողջ վարույթի ընթացքում նրան ներկայացրել է փաստաբանը, նա պետք է տեղյակ լիներ այդ միջոցի մասին: Դիմումատուն, հետեւաբար, չի սպառել իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցները, եւ նրա գանգատը պետք է հայտարարվի անընդունելի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

34. Դիմումատուն պնդել է, որ քրեական վարույթի շրջանակներում վարույթը չէր կարող արդյունավետ լինել, քանի որ իրավաբանական անձինք պատասխանատվության չեն ենթարկվում քրեական հանցագործությունների համար, միայն ֆիզիկական անձինք կարող են լինել հանցագործություն կատարողներ: Հենց Գրասենյակն է նպաստել ապօրինի գործողությանը՝ իր ակտիվները իրենց բանկային հաշվին պահելով, այլ ոչ Գրասենյակի աշխատակիցը, ով ստացել է գումարը եւ փոխանցել Գրասենյակի բանկային հաշվին: Եթե անգամ դիմումատուն բողոք ներկայացներ ոստիկանություն, ապա դա միանշանակ չէր հանգեցնի քրեական գործ հարուցելուն, քանի որ քրեական վարույթ հարուցելը թողնված է եղել դատախազի հայեցողությանը:

35. Դատարանը նշում է, որ դիմումատուն, նախքան իր գանգատը Դատարան ներկայացնելը, քաղաքացիական վարույթ էր սկսել ներպետական դատարաններում, որոնք ավարտվել էին 2010 թվականի հուլիսի 21-ի վերջնական որոշմամբ: Այդ քաղաքացիական վարույթները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով պետք է համարվեն «իրավական պաշտպանության արդյունավետ միջոց», քանի որ 2008 թվականի հուլիսի 16-ին Երեւանի քաղաքացիական դատարանը մասնակիորեն բավարարել էր դիմումատուի պահանջները (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը): Չնայած գործի ելքը նպաստավոր չէր դիմումատուի համար, դա չի նշանակում, որ նրա հնարավորությունները քաղաքացիական վարույթի ընթացքում ակնհայտորեն

զուրկ էին հաջողության հեռանկարից: Այն փաստը, որ կարող էին լինել իրավական պաշտպանության այլ միջոցներ դիմումատուին նշված գումարը վերադարձնելու մասով Գրասենյակի մերժումը վիճարկելու համար, չի նշանակում, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները (տե՛ս Վուչկովիչն ու այլք ընդդեմ Սերբիայի (նախնական առարկություն) [ՄՊ] [Vučković and Others v. Serbia (preliminary objection) [GC]], թիվ 17153/11 եւ մյուս 29-ը, § 74, 2014 թվականի մարտի 25): Հետեւաբար, Կառավարության նախնական առարկությունը պետք է մերժվի:

36. Դատարանը, հետեւաբար, նշում է, որ գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուն

37. Դիմումատուն պնդել է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետը չէր կարող ծառայել որպես իրավական հիմք միջամտության համար, քանի որ դիմումատուն տեղյակ չի եղել վճարումը կատարելիս դրամական միջոցները վերադարձնելու որեւէ պարտավորության բացակայության մասին: Կառավարությունը չի ապացուցել նրա տեղեկացված լինելու փաստը: Տրամաբանական է, որ դիմումատուն պետք է հավատար, որ ինքը պարտավոր էր պետությանը վերադարձնել դրամական միջոցների մի մասը, քանի որ նրան ասվել էր, որ դրանք չվերադարձնելը կհանգեցնի իր դեմ քրեական վարույթի հարուցմանը: Երբ Գրասենյակի աշխատակիցների նկատմամբ հարուցված քրեական վարույթն ավարտվել է, դիմումատուի համար պարզ է դարձել, որ ինքը գումարը հետ է վճարել առանց որեւէ իրավական հիմքի: Քանի որ

Քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի չէր դիմումատուի գործի նկատմամբ, նրա դրամական միջոցները վերադարձնելու մերժումն օրինական չէր:

38. Ավելին, դիմումատուն նշել է, որ Կառավարությունը չի ապացուցել իր դրամական միջոցներն իրեն վերադարձնելու մերժման մասին որոշման մասով հանրային շահի առկայությունը: Միջամտությունը նաեւ անհամաչափ է եղել:

բ) Կառավարությունը

39. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն վերադարձրել է դրամական միջոցներն իր սեփական ազատ կամքով, այլ ոչ որեւէ իրավական ակտի կամ դրույթի ուժով: Վարչական շրջանի դատարանը գտել է, որ դիմումատուն չի ապացուցել իրեն վնաս հասցնելու մեջ Գրասենյակի մեղավորությունը. եւ ոչ էլ դրամական միջոցները Գրասենյակին վերադարձնելու մասով նրա մեղավորությունն է հիմնավորվել: Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները եւ այլ գույք, եթե ձեռք բերողն ապացուցել է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին, ենթակա չէին վերադարձման որպես անհիմն հարստացում: Դիմումատուն չի հերքել քննարկվող գումարը վերադարձնելու ցանկացած տեսակի պարտավորության բացակայությունը, սակայն պնդել է, որ դրամական միջոցների վերադարձը տեղի է ունեցել միայն այն պատճառով, որ ինքն այդ ժամանակ շփոթված է եղել: Այսպիսով, նրա դրամական միջոցները վերադարձնելու մերժումն իրականացվել է քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան:

40. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն տվյալ գործով երբեք հանրայի շահին առնչվող հարց չի բարձրացրել, հետեւաբար, այս հարցը ներպետական դատարանների կողմից դիտարկման առարկա չի եղել: Ինչ վերաբերում է համաչափությանը՝ ներպետական դատարանների կողմից

ձեռնարկված գործողությունները համաչափ են եղել դիմումատուի ձեռնարկած գործողություններին: Նա զրկված չի եղել իր պահանջը մրցակցային դատավարության կարգով ներակայացնելու հնարավորությունից:

2. *Դատարանի գնահատականը*

41. Դատարանը հիշեցնում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիմնական էությունն անձին՝ իր սեփականությունից անարգել օգտվելու հարցում պետության կողմից չարդարացված միջամտությունից պաշտպանելն է: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով Պայմանավորվող յուրաքանչյուր կողմ «իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում է այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայում»: Այս ընդհանուր պարտականությունը կատարելը կարող է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների արդյունավետ կատարումն ապահովելու գործընթացին բնորոշ դրական պարտավորություններ առաջացնել: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում այդ դրական պարտավորություններով պետությունից կարող են պահանջվել ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ գույքի նկատմամբ իրավունքը պաշտպանելու համար (տե՛ս Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի [ՄՊ] [*Broniowski v. Poland* [GC]], թիվ 31443/96, § 143, ՄԻԵԴ 2004-V, եւ Անտոնյանն ընդդեմ Հայաստանի [*Antonyan v. Armenia*], թիվ 3946/05, § 49, 2012 թվականի հոկտեմբերի 2):

42. Դատարանը նշում է, որ դրամական միջոցները համարվում են «գույք»՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Ավելին, ներպետական իրավական համակարգում դրամական միջոցները համարվում են նաեւ քաղաքացիական իրավունքի օբյեկտներ: Հետեւաբար, սույն գանգատի նկատմամբ այս հոդվածի կիրառելիության մասով կասկածներ չկան:

43. Դատարանը նշում է, որ կողմերի կողմից չի վիճարկվել այն փաստը, որ դիմումատուն Գրասենյակին է վճարել 75 820 000 ՀՀ դրամ (մոտավորապես

133 958 եվրո): Այս վճարումը վճռորոշ է եղել այն իմաստով, որ դրա արդյունքում դիմումատուն զրկվել է այս գումարի նկատմամբ սեփականության իրավունքից: Այսպիսով, տեղի է ունեցել դիմումատուի գույքից զրկում՝ տվյալ գումարին առնչվող հարցի մասով: Հետեւաբար, սույն գործում գլխավոր հարցն այն է, թե արդյոք Գրասենյակն իրավունք ուներ պահելու դիմումատուի դրամական միջոցները ցանկացած պատճառով, որով դրանք հայտնվել էին դրա տնօրինման ներքո:

44. Դատարանը կրկին նշում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համատեղելի լինելու համար, գույքից զրկելը պետք է բավարարի հետեւյալ երեք պայմանը. այն պետք է իրականացվի ազգային իշխանությունների կողմից ցանկացած կամայական գործողություն բացառող՝ «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան», պետք է բխի «հանրային շահերից», ինչպես նաեւ դրանով պետք է հաստատվի արդարացի հավասարակշռություն սեփականատիրոջ իրավունքների եւ համայնքային շահերի միջեւ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վիստինջը եւ Պերեյոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [*Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC]], թիվ 71243/01, § 94, 2012 թվականի հոկտեմբերի 25): Այսպիսով, Դատարանը կանցնի այն հարցի ուսումնասիրությանը, թե արդյոք սույն գործում բավարարվել է այդ երեք պայմանը:

ա) «Օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան»

45. Դատարանը վերահաստատում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին եւ ամենակարեւոր պահանջն այն է, որ պետական մարմինների կողմից գույքից անարգել օգտվելու իրավունքին ցանկացած միջամտություն լինի օրինական (տե՛ս *Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Iatridis v. Greece* [GC]], թիվ 31107/96, § 58, ՄԻԵԴ 1999-II): Այնուամենայնիվ, իրավական հիմքերի առկայությունն ինքնին բավարար չէ օրինականության սկզբունքը բավարարելու համար, ինչը նաեւ ենթադրում է, որ ներպետական օրենսդրության կիրառելի դրույթներն իրենց կիրառման մեջ բավականաչափ հասանելի են, հստակ եւ կանխատեսելի: Այդ սկզբունքի համաձայն՝ Դատարանը պետք է նաեւ ստուգի, թե արդյոք ներպետական դատարանների կողմից ներպետական օրենսդրության

մեկնաբանումը եւ կիրառումը հանգեցնում է այնպիսի հետեւանքների, որոնք համապատասխանում են Կոնվենցիայի սկզբունքներին (տե՛ս, օրինակ, Ապոստոլիդին եւ այլք ընդդեմ Թուրքիայի [Apostolidi and Others v. Turkey], թիվ 45628/99, § 70, 2007 թվականի մարտի 27):

46. Սույն գործում Կառավարությունը որպես դիմումատուի գույքը չվերադարձնելու իրավական հիմք ընդունել է Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 4-րդ կետը, քանի որ դիմումատուն ենթադրաբար վճարել է գումարը՝ իմանալով, որ եւ՛ ըստ օրենքի, եւ՛ պայմանագրի հիման վրա, նա պարտավոր չէր դա անել:

47. Դատարանն ընդունում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 4-րդ կետը ամուր իրավական հիմք է ապահովում տվյալ միջամտության համար, պայմանով, որ այդ դրույթով սահմանված նախապայմանները կատարվեն: Դատարանի համար սույն դրույթն իր կիրառման մեջ նաեւ բավականաչափ հասանելի է, հստակ եւ կանխատեսելի: Թվում է, դիմումատուն նույնպես ընդունել է սա, որը միայն պնդում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 4-րդ կետը կիրառելի չէր իր գործով, քանի որ նախապայմանները չեն կատարվել, մասնավորապես այն, որ նա տեղյակ չի եղել վճարումը կատարելիս դրամական միջոցները վերադարձնելու որեւէ պարտավորության բացակայության մասին: Մի կողմ թողնելով ներպետական օրենսդրության կիրառմանն առնչվող հարցերը եւ փաստերի գնահատումը, ինչը ներպետական դատարանների խնդիրն է, Դատարանը համարում է, որ տվյալ դրույթը բավականաչափ հստակ իրավական հիմք է քննարկվող միջամտության համար, որը, հետեւաբար, «համապատասխանում էր օրենքով նախատեսված պայմաններին»:

բ) «Բխում է հանրային շահից»

48. Դատարանը կրկին նշում է, որ քանի որ ազգային իշխանություններն անմիջականորեն տեղեկացված են իրենց հասարակության ու դրա կարիքների մասին, ընդհանուր առմամբ, նրանք միջազգային դատավորներից ավելի լավ

կարող են գնահատել, թե որն է «հանրային շահը»: Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգի համաձայն՝ ազգային իշխանությունները պետք է իրականացնեն հանրությանը մտահոգող խնդրի առկայության նախնական գնահատում՝ հիմնավորելով գույքից զրկելու միջոցառումները: Այստեղ, ինչպես մյուս այն ոլորտներում, որոնց վրա տարածվում են Կոնվենցիայի երաշխիքները, ազգային իշխանությունները համապատասխանաբար ունեն հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Ավելին, «հանրային շահը» միանշանակ լայն հասկացություն է: Մասնավորապես, գույքի օտարման մասին օրենքներ ընդունելու որոշումը ընհանուր առմամբ կներառի քաղաքական, տնտեսական եւ սոցիալական հարցերի քննարկում: Դատարանը, բնական համարելով այն հանգամանքը, որ սոցիալական եւ տնտեսական քաղաքականությունների իրականացման համար օրենսդրի հայեցողական լիազորությունների շրջանակը պետք է լինի լայն, կհարգի օրենսդրի որոշումն այն մասով, թե որն է «հանրային շահը», եթե այդ որոշումն ակնհայտ անհիմն չէ (տե՛ս Բեյելերն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Beyeler v. Italy [GC]], թիվ 33202/96, § 112, ՄԻԵԴ 2000-Լ, եւ վերետում հիշատակված՝ Վիստինշի եւ Պերեայյուկինսի գործը, § 106):

49. Դատարանը նշում է, որ Կառավարությունը որեւէ փաստարկ չի ներկայացրել, թե հանրային ինչ շահի էր ծառայում դիմումատուի գույքի չվերականգնումը: Գործի նյութերից երեսում է, որ այս հարցը պարզապես չի քննարկվել ներպետական վարույթի շրջանակներում: Քանի որ Դատարանը չի կարող ենթադրել՝ արդյոք միջամտությունը ծառայել է հանրային շահի, թե ոչ, Դատարանը չի կարող չեզրակացնել, որ ներպետական դատարանները չեն ապացուցել, որ դիմումատուին իր գույքից զրկելն իրականացվել է՝ ելնելով հանրային շահից:

50. Հետեւաբար, տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

գ) Վիճարկվող միջոցառման համաչափությունը

51. Հաշվի առնելով վերոնշյալ եզրակացությունը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում ուսումնասիրել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մյուս պահանջներին համապատասխանությունը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

52. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

53. Դիմումատուն պահանջել է 104 061 598 ՀՀ դրամ՝ որպես նյութական վնասի հատուցում: Պահանջվող գումարը բաղկացած էր հետեւյալ տարրերից՝ 75 820 000 ՀՀ դրամ՝ Գրասենյակին վճարված գումարի համար, 16 607 187 ՀՀ դրամ՝ օտարված գույքի ընդհանուր փոխհատուցման գումարից 10% եկամտահարկի նվազեցման համար, եւ 7 578 000 ՀՀ դրամ՝ ոչ թե 214 479.9 ԱՄՆ դոլար գումարից, այլ 394 479.9 ԱՄՆ դոլար գումարից 10% եկամտահարկի նվազեցման համար: Ավելին, նա պահանջել է 5 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

54. Կառավարությունը համարել է, որ 75 820 000 ՀՀ դրամի պահանջը հիմնավոր չէր, քանի որ դիմումատուի իրավունքների խախտում տեղի չի ունեցել: Օտարման այն վարույթներին առնչվող՝ 16 607 187 ՀՀ դրամ եւ 7 578 000 ՀՀ դրամ կազմող գումարները, որոնք սույն գանգատի առարկա չեն եղել, եւ, հետեւաբար, այդ առնչությամբ բողոքը պետք է մերժվի: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա Կառավարությունը համարել է, որ դիմումատուի պահանջած գումարը չափազանցված է եւ պետք է նվազեցվի:

55. Հաշվի առնելով հայտնաբերված խախտման բնույթը՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուն անկասկած կրել է որոշ նյութական եւ ոչ նյութական վնաս: Ելնելով սույն գործի կոնկրետ հանգամանքներից՝ Դատարանը դիմումատուին շնորհում է 133 958 եվրո՝ որպես նյութական եւ 2 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

56. Դիմումատուն նաեւ պահանջել է 4 056 411 ՀՀ դրամ՝ տեղական դատարաններում եւ 600 000 ՀՀ դրամ՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

57. Կառավարությունը համարել է, որ ներպետական դատարաններում կրած ծախսերի եւ ծախքերի գումարի մասով պահանջը պետք է մերժվի, քանի որ որեւէ խախտում տեղի չի ունեցել: Նրանք Դատարանի վարույթում կրած ծախսերի համար պահանջվող գումարը համարել են չափազանցված:

58. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը ողջամիտ է համարում երկուսի մասով շնորհել 3 000 եվրո:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

59. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.
3. Վճռում է, որ՝
 - ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.
 - i) նյութական վնասի դիմաց՝ 133 958 եվրո (հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր հիսունութե եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,
 - ii) ոչ նյութական վնասի դիմաց՝ 2 000 եվրո (երկու հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,
 - iii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 3 000 եվրո (երեք հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.
 - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.
4. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի մայիսի 16-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեգեներ

Ալեշ Պեյխալ

Քարտուղարի տեղակալ

Նախագահ